01/10.1/7582-09

2009-11-03

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ՀՈՎԻԿ
ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Արմեն Մարտիրոսյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ:

1. Նախագծով նախատեսված վարորդի ոչ սթափ վիճակի ստուգման անհրաժեշտության դեպքում բուժհիմնարկ բերման ենթարկելն ըստ էության ազատությունից զրկում է, ինչը չի բխում Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 16-րդ հոդվածի պահանջներից, որոնց համաձայն յուրաքանչյուր ոք ունի անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունք: Մարդուն կարելի է ազատությունից զրկել օրենքով սահմանված դեպքերում և կարգով: Ուստի վարորդի ոչ սթափ վիճակի ստուգման անհրաժեշտության դեպքում բուժհիմնարկ բերման ենթարկելու հետ կապված դրույթները չեն կարող նախատեսվել միայն Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ:

2. Նախագծով առաջարկվող տեղում սթափության վիճակի գործիքային ստուգումը չի կարող լիարժեք լինել։

Բացի դրանից՝

1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 126-րդ հոդվածով վարչական պատասխանատվություն է նախատեսված տրանսպորտային միջոցները վարորդների կողմից հարբած կամ թմրամիջոցներ օգտագործած վիճակում վարելու, ինչպես նաև տրանսպորտային միջոցների վարումը հարբած կամ թմրամիջոցներ օգտագործած վիճակում գտնվող անձին հանձնելու, սահմանված կարգին համապատասխան հարբածության կամ թմրամիջոցների օգտագործման վիճակի զննություն անցնելուց խուսափելու համար։

2. Վարորդի ոչ սթափ վիճակի ստուգումն արդեն իսկ կարգավորված է «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» ենթակետի երկրորդ պարբերությամբ և Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի մարտի 19-ի «Վարորդների սթափության վիճակի զննության կարգը, այդ զննության արձանագրության և գրանցման մատյանի ձևերը հաստատելու մասին» N 277-Ն որոշմամբ։

3. «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ՝ «Բժշկական օգնության և սպասարկման իրականացումն առանց մարդու համաձայնության» հոդվածով սահմանված են առանց մարդու համաձայնության բժշկական օգնության և սպասարկման իրականացման դեպքերը, որով տրանսպորտային միջոցներ վարող վարորդների կամ մյուս այլ անձանց նկատմամբ սթափության վիճակի ստուգում նախատեսված չէ։

Այսպիսով, այսօր գործող Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ ամբողջովին կարգավորված են վարորդների սթափ վիճակի ստուգման հետ կապված հարաբերությունները։ Այլ հարց է խնդրի կարգավորման նոր, առավել արդյունավետ մեխանիզմների սահմանումը, ինչը սակայն ներկայացված նախագծով չի կարգավորվում։ Հարկ ենք համարում տեղեկացնել, որ

Հայաստանի Հանրապետության վարչապետը Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանությանը հանձնարարել է իրականացնել վիճակի ուսումնասիրություն, կազմակերպել ներքին քննարկումներ և դրանց արդյունքով ձեռնարկել միջոցներ՝ վարչարարությունն ուժեղացնելու ուղղությամբ։

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը դեմ է ներկայացված տեսքով օրենքի նախագծի ընդունմանը։

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի առաջին տեղակալ Գևորգ Մալխասյանը։

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Նախագիծ
Պ-720-28.09.2009-ՊԻ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին

Հոդված 1. «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի (6 դեկտեմբերի 1985 թվականի, այսուհետ՝ օրենսգիրք) 265-րդ հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«*Հոդված 265.* Տրանսպորտային միջոցներ վարող այն վարորդների կամ մյուս այն անձանց, որոնց նկատմամբ բավարար հիմքեր կան ենթադրելու, որ նրանք գտնվում են ոչ սթափ վիճակում (ալկոհոլի հոտ, դիրքի անկայունություն, խոսքի աղավաղվածություն, ձեռքի մատների դող, իրադրությանը չհամապատասխանող պահվածք, ալկոհոլային խմիչք օգտագործելու վերաբերյալ անձի խոստովանություն) ենթակա են տեղում սթափության վիճակի գործիքային ստուգման։

Նշված անձանց տեղում ոչ սթափ վիճակի ստուգումն անհրաժեշտության դեպքում բուժհիմնարկ բերման ենթարկելը եւ բուժհիմնարկում նրանց ստուգման անցկացումը կատարվում է ՀՀ Կառավարության կողմից որոշվող կարգով։

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը։

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 265-րդ հոդվածը նախատեսում է, որ եթե վարորդների նկատմամբ բավարար հիմքեր կան ենթադրելու, որ նրանք գտնվում են ոչ սթափ վիճակում, ապա նրանց հարբածության վիճակի ստուգման ուղարկելը եւ ստուգման անցկացումը կատարվում է ԽՍՀՄ առողջապահության նախարարության եւ ԽՍՀՄ ներքին գործերի նախարարության եւ ԽՍՀՄ արդարադատության նախարարության կողմից սահմանված կարգով:

Այդ հարցը կանոնակարգող ՀՀ այլ օրենք չկա:

Սակայն ճանապարհապարեկային ծառայության տեսուչները վարորդին բուժհիմնարկ բերման են ենթարկում՝ հիմք ընդունելով իրենց հոտընկալումը կամ ուղղակի քմահաճորեն: Նման գործողությունների արդյունքում 2008 թվականին «Շտապօգնություն» ՓԲԸ բերման ենթարկված ավելի քան 300 վարորդ ստուգումից հետո ճանաչվել են սթափ վիճակում գտնվող, սակայն կրել են բարոյական վնաս եւ ժամանակի կորուստ:

2. «Ճանապարհային երթեւեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքը, ինչպես նաեւ ՀՀ Կառավարության 19.03.2009թ. թիվ 277-Ն «Վարորդի սթափության վիճակի զննության կարգը», այդ զննության արձանագրության եւ գրանցման մատյանի ձեւերը հաստատելու մասին» որոշումը չեն սահմանում, թե որո՞նք են վարորդի ոչ սթափ վիճակում գտնվելու բավարար հիմքերը եւ ո՞ր դեպքերում եւ ի՞նչ կարգով է իրականացվում բուժհիմնարկ բերման ենթարկելը:

Հաշվի առնելով նաեւ այն հանգամանքը, որ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենքը որոշ վարորդների նկատմամբ նախատեսում է ոչ սթափ վիճակում տրանսպորտային միջոց վարելու իրավունքից զրկում, այս նախագծի ընդունումը կտրուկ կնվազեցնի բուժհիմնարկ անհիմն բերման ենթարկելը եւ նշված իրավունքից հանիրավի զրկելու դեպքերը: